

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՄԻ-ի ռեկտոր

_____ Գ.Կ. Խաչատրյան

“ 04 ” _04___ 2012թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության
հոգեբանական խորհրդատվական կենտրոնի

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ _4__ “_04__ “_04__ 2012թ.)

1. Ընդհանուր դրույթներ

ա) «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) հոգեբանական խորհրդատվական կենտրոնը (այսուհետև՝ կենտրոն) Ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի կազմում ստեղծված հոգեբանական խորհրդատվական ծառայություն, գիտաուսումնական և ուսումնամեթոդական գործունեություն իրականացնող ստորաբաժանում է:

բ) Կենտրոնը Ինստիտուտի ուսանողներին և աշխատակիցներին անվճար հիմունքներով մատուցում է տարաբնույթ ծառայություններ՝ կապված հոգեբանական խորհրդատվական խնդիրների լուծման, հոգեբանական օգնության կազմակերպման, գործընթացների հետ:

գ) Կենտրոնը կարող է վճարովի հիմունքներով կազմակերպել որակավորման բարձրացման դասընթացներ, որոնց ավարտից հետո Ինստիտուտի անունից շնորհել համապատասխան վկայական :

2. Կենտրոնի առաքելությունը, նպատակները և խնդիրները

I. Կենտրոնի առաքելությունն է՝

-աջակցել Ինստիտուտի կրթական համակարգում Բոլոնիայի գործընթացով նախատեսվող բարեփոխումներին:

-աջակցել Ինստիտուտ-հասարակություն կապի ընդլայնմանն ու արդյունավետ համագործակցությանը:

- նպաստել Ինստիտուտի ուսանողների և աշխատակիցների հոգեբանական առողջության և կենսագործունեության բարելավմանը:

II. Կենտրոնի նպատակներն են՝

-տարածել հոգեբանական նորագույն գիտելիքներ Լոռու մարզի դպրոցներում, մանկավարժական և սոցիալական ուղղվածություն ունեցող հիմնարկներում :

-օգնել վերը նշված հիմնարկներին պատրաստելու, վերապատրաստելու հոգեբանական և սոցիալական ոլորտում աշխատանքներ կատարող մասնագետներ:

- աշխատանք տանել կիրառական հոգեբանության, կիրառական մանկավարժության և սոցիալական աշխատանքի համակարգերի ստեղծման համար:

- օգնել Ինստիտուտի ղեկավարությանը սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման հարցում:

-կատարել ազգային առանձնահատկությունների վերլուծություն՝ տեղական պայմանների հաշվառմամբ, հանրապետության զարգացման հեռանկարներին համապատասխան:

III. Կենտրոնի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել, դասակարգել, տեղայնացնել և բնութագրել այն հիմնախնդիրները (դժվարին, կոնֆլիկտային, արհեստականորեն խճճված, բարդ իրադրություններ), որոնք չեն կարող լուծվել ուսանողների կամ մանկավարժների կողմից:

- Իրականացնել հոգեբանական խորհրդատվություն Ինստիտուտի՝ դրա կարիքն ունեցող ուսանողներին և աշխատակիցներին:
- Կազմակերպել որակավորման բարձրագույն վճարովի եռամսյա դասընթացներ Լոռու մարզի նախադպրոցական, դպրոցական և այլ կրթական հիմնարկներում ու հասարակական կազմակերպություններում աշխատող մասնագետների համար՝ դասընթացի ավարտին տրամադրելով համապատասխան վկայականներ:
- ստեղծել դպրոցի հոգեբանի երդման տեքստ:
- Օգնել Ինստիտուտի ղեկավարությանը սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման հարցում:
- Մասնակցել պետական և միջազգային դրամաշնորհներին:
- Աջակցել Լոռու մարզի դպրոցներում հոգեբանական ծառայության կազմակերպմանը:

3. Կենտրոնի իրավունքներն ու պարտականությունները

- Կենտրոնը իրավունք ունի հանդես գալ առաջարկություններով իր գործունեության խնդիրներին և նպատակներին համապատասխան:
- Կենտրոնը պարտավոր է՝
 - ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, Ինստիտուտի կանոնադրությամբ և Ինստիտուտի ռեկտորի հրամաններով:
 - Տարեկան կատարված աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնել Ինստիտուտի ռեկտորին կամ պրոռեկտորին:
 - Վարել կենտրոնի գործունեության արդյունքների հաշվառում:
 - Պահպանել տեխնիկայի անվտանգության և հակահրդեհային կանոնները:

4. Կենտրոնի գույքի աղբյուրները

Կենտրոնն իր գործունեությունը իրականացնելու համար իրավունք ունի Կենտրոնի գույքի ձեռք բերման աղբյուրներ են հանդիսանում՝

- Ինստիտուտի կողմից տրամադրված դրամական և նյութական միջոցները:
- վճարովի դասընթացներից ստացված գումարները,
 - բարեգործական ներդրումները, նվիրատվությունները, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

5. Կենտրոնի կազմը և կառուցվածքը

- Կենտրոնի հաստիքացուցակը ձևավորվում է ռեկտորի հրամանով:
- Կենտրոնի ղեկավարը և կամ հոգեբան-խորհրդատուն կազմակերպում, իրականացնում և վերահսկում է կենտրոնի աշխատանքները:
- Կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացների ունկնդիրների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և Ինստիտուտի հետ կնքած պայմանագրով:
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմը դասընթացների անցկացմանը մասնակցում է կամավոր հիմունքներով: Կենտրոնի դասավանդողների անձնակազմը ձևավորվում է Ինստիտուտի ղեկավարության կողմից:
- Դասընթացների մասնակիցներն իրավունք ունեն նախապես ծանոթանալու տվյալ դասընթացի համար առաջարկված պրոֆեսորադասախոսական

անձնակազմի ներկայացուցիչների հետ և առաջարկել իրենց կողմից հավանության առջանացած թեկնածուներին՝ տվյալ ծրագրով դասընթացներ անցկացնելու համար:

6. Կենտրոնի և հիմնադրի հարաբերություններն ու կառավարումը:

- Ինստիտուտի ռեկտորի կողմից նշանակվում է կենտրոնի ղեկավար կամ հոգեբան-խորհրդատու (ներ): Կենտրոնի ղեկավարը կամ ավագ հոգեբան-խորհրդատուն, (մեկ հոգեբան-խորհրդատուի դեպքում՝ հոգեբան-խորհրդատուն) վարում է կենտրոնի գործունեությունը՝ համաձայնեցնելով հիմնադրի հետ:
- կենտրոնը կառավարում է Ինստիտուտի ռեկտորը, պրոռեկտորը, իսկ օպերատիվ կառավարումն ու անմիջական ղեկավարումը իրականացնում է կենտրոնի ղեկավարը կամ հոգեբան-խորհրդատուն, որը պաշտոնի նշանակվում և ազատվում է բուհի ռեկտորի կողմից:
- կենտրոնի ղեկավարը, (հոգեբան-խորհրդատուն(ներ) գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, Ինստիտուտի կանոնադրությամբ, Ինստիտուտի ռեկտորի հրամաններով , կարգադրություններով և սույն կանոնակարգով.
- սույն կանոնակարգը և կենտրոնի կառուցվածքը հաստատում է Ինստիտուտի ռեկտորը:

7. Կենտրոնի փինանսավորումը և հաշվարկները

- Կենտրոնում դասընթացները կազմակերպվում են վճարովի հիմունքներով:
- Դասընթացի փաթեթի արժեքն է՝ 75.000 (յոթանասուներեք հազար) դրամ: Դասընթացները անցկացվում են երեք ամիս տևողությամբ, շաբաթ օրերին: Դասընթացի փաթեթը կազմված է 80 (ութսուն) ակադեմիական ժամից:
- Սոցիալապես անապահով ունկնդիրների համար կարող է կիրառվել զեղծ: Դասընթացների կազմակերպիչը և դասավանդող մասնագետները վճարվում են առաջացած գումարների հաշվին՝ ժամավճարային կարգով:

8. Կենտրոնի լուծարումը, գործունեության դադարեցումը և վերակազմավորումը

- Կենտրոնը լուծարվում, գործունեությունը դադարեցնում կամ վերակազմավորվում է.
- ՀՀ գործող օրենսդրությամբ.
 - Ինստիտուտի ռեկտորի հրամանով.
 - պետական լիազորված մարմինների որոշմամբ
 - դատարանի որոշմամբ.